ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԵՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԱԴՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր եռուշարձաններ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 189 էջ։

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը վաղուց ի վեր եղել և մնում է ինչպես հայ, այնպես էլ օտարազգի գիտնականների ուսումնասիրության առարկա։ Չափազանց մեծ է և արժեքավոր հայ ժողովրդի ներդրումը մշակույթի մի այնպիսի կարևոր բնագավառում, ինչպիսին ճարտարապետությունն է։ Ստեղծվում են բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված հայ ճարտարապետության ընդհանուր պատմությանը, նրա առանձին ուղղություններին ու դպրոցներին, կառուցվածքների տարբեր տիպերին, հուշարձանախմբերին ու առանձին հուշարձաններին։ Առանձնապես կարևոր և անհրաժեշտ են հուշարձանների առանձին տիպերին նվիրված ուսումնասիրությունները, որովհետև հայ ճարտարապետությունը (հատկապես վաղ միջնադարում) աչքի է ընկնում հորինվածքների այնպիսի բազմազանությամբ, որն այդ ժամանակաշրջանում չի հանդիպում ոչ մի այլ երկրում։ Սակայն միջնադարյան հայ ճարտարապետության առանձնահատուկ դերը և կարևոր նշանակությունն առաջին հերթին այն է, որ շենքերի տիպերի մի մասը ստեղծվել է հենց Հայաստանում և հայ արվեստի զարգացման արդասիքն է։ Իսկ դա, հիրավի, կարելի է հայ ճարտարապետների ու շինարարների ստեղծագործական սխրանքը համարել, որովհետև շատ քիչ երկրների ճարտարապետական դպրոցներ կարող են պարծանալ կառուցվածքների նոր տիպերի ստեղծմամբ։

Հայաստանում մշակված էջմիածին—Բագարանի, Մաստարայի, գմբեթավոր դահլիճի, Ավան—Հռիփսիմեի, Զվարթնոցի հորինվածքները համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներից են, և դրանցից մի քանիսը տարածվել ու կիրառվել են նաև այլ երկրներում։ Սակայն, ցավոք, Հայաստանում վաղ միջնադարում հանդիպող ճարտարապետական տիպերից շատ քչերն են արժանացել մենագրական ուսումնասիրության (կարելի է նշել միայն եռանավ բազիլիկաները, Ավան—Հռիփսիմեի և Զվարթնոցի տիպի հուշարձանները)։ Վ. Գրիգորյանի աշխատությունը՝ նվիրված փոքր խաչաձև գմբեթավոր հուշարձաններին, գալիս է լրացնելու այդ բացը։ Ուսումնասիրվող այս տիպը հանդիպում է ոչ միայն Հայաստանում. վաղ միջնադարում այն կիրառվել է նաև Բյուզանդիայում և Փոքր Ասիայում, Սիրիայում ու Վրաստանում։ Գրախոսվող մենագրության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ հրատարակված մոտ չորս տասնյակ հուշարձանների մի զգալի մասն առաջին անգամ է ուսումնասիրվում և գիտական աշխարհին ներկայացվում։ Գրականության մեջ մինչ օրս հայտնի փաստորեն մեկ տասնյակ հուշարձանի փոխարեն, երբ ունենում ենք արդեն մոտ քառասունը, ապա քանակը հիրավի փոխվում է որակի, և Վ. Գրիգորյանն իրավացիորեն եզրակացնում է, որ «Բյուզանդիայի, Սիրիայի, Փոքր Ասիայի հետ մեկտեղ Հայաստանը վաղ միջնադարում եղել է կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների տիպի մշակման կենտրոն։ Հայ ճարտարապետները, առաջադրելով ...ինքնատիպ տարբերակներ՝ բյուզանդական, սիրիական և վրացական լուծումներից տարբեր, խոշոր ավանդ ունեն կենտրոնագմբեթ փոքր կառուցվածքների ճարտարապետական տիպի ստեղծագործական մշակման գործում» (էջ 85)։

Հետաքրքրական է այն փաստը, որ գրքում ներկայացված 38 հուշարձաններով չի սպառվում Հայաստանում այդ տիպի կառուցվածքների թիվը։ Աշխատության ապագրության ընթացքում պեղումներով բացվեցին VI—VII դդ. երեքու նույնատիպ եկեղեցի ևս. մեկը քառախորան, Եղվարդի Զորավոր տաճարի (661—685) մոտ, մյուսը միախորան՝ Թալինի շրջանի Ներքին Սասունաշեն գյուղում։ Եվ վստահորեն կարելի է ասել, որ ժամանակի ընթացքում կրացահայտվեն ուրիշները ևս։

Ուսումնասիրության կառուցվածքը հաջող է և գիտականորեն ճիշտ. հուշարձանները խմբավորված են ըստ հիմնական նախատիպերի՝ քառախորան, եռախորան և միախորան։ Առաջին գլխում ներկայացված են 7 քառախորան հուշարձան, որոնք, հեղինակի վերլուծության հիման վրա, թվագրվում են V, VI և VII դդ.։ Դրանցից Մորո Հորո վանքի ս. Աստվածածին

եկեղեցին (V դ. վերջ) գմբեթավոր հուշարձանների մեջ առանձնակի կարևորություն է ստանում խաչաթևերի արտաքին կիսաշրջանաձև հորինվածքով և դրանց թվում «ինքնին եզակի վկայությունն է դեռևս V դարում կիրառված շինարարական մի տեխնիկայի, ըստ որի կառույցի կոնստրուկտիվ կարևոր տարրերն ու հանգույցները շարվել են սրբատաշ, իսկ մնացած մասերը՝ համեմատաբար անմշակ քարերով» (էջ 17)։ Այս վերջին առանձնահատկությունը խիստ կարևոր է միջնադարյան հայ ճարտարապետության և շինարարական տեխնիկայի պատմության համար։ Մինչև օրս ընդունված էր այն տեսակետը, որ վաղ միջնադարում Հայաստանում պաշտամունքային շինները կառուցվել են բացառապես սրբատաշ քարով։ Մորո Ձորո վանքը, այս գրքում ներկայացվող մի այլ հուշարձան՝ Բյուրականի Արտավազիկ միախորան եկեղեցին (VII դ.), ինչպես նաև Լուսակերտի միանավ դահլիճը (IV—V դդ.), որոնք կառուցված են նաև կիսամշակ ու կոպտատաշ քարի օգտագործումով, հերքում են վերը նշված տեսակետը և հնարավորություն տալիս վերանայել հայկական մի շարք հուշարձանների թվագրումը, որոնք ունենալով վաղ միջնադարին բնորոշ ճարտարապետական առանձնահատկություններ, թվագրվել են դարդացած ֆեոդալիզմի դարաշրջանով՝ հիմնականում քարի մշակման աստիճանից ելնելով (օրինակ, Քոլատակի ս. Աստվածածին հռիփսիմեատիպ եկեղեցին)։

Արղնիի ս. Կիրակի քառախորան կառուցվածքը (VI դ.) արտաքինից պարփակված է ութանիստ ծավալով և ունի վաղ միջնադարյան մկրտարանների հորինվածքը՝ իր հատակագծային և ծավալատարածական լուծումներով էապես տարբերվելով եկեղեցիներից։ Հետևաբար, այն դառնում է մեզ հասած հայկական միակ մկրտարանը, որի գոյությունը Հայաստանում V—VII դդ. մեզ հայտնի է եկեղեցական կանոններից և պատմիչներից։ Առաջին գլխում ներկայացված այս քառախորան հուշարձանները հերքում են որոշ մասնագետների այն կարծիքը, թե վաղ միջնադարում նման հորինվածք Հայաստանում չի հանդիպում։ Սա, իհարկե, ակնհայտ անհիմն տեսակետ էր, որովհետև V—VII դդ. հայ ճարտարապետության մշակած պաշտամունքային կառուցվածքների մի շարք կատարյալ տիպերի հիմքը հենց քառախորան հորինվածքն էր։ Եվ իրավացի է Վ. Գրիգորյանը, երբ նշում է, որ «այս յոթ հուշարձանների գոյությունն փաստն ինքնին վկայում է, որ V—VII դարերի հայկական ճարտարապետության մեջ արդեն ձևակերպված են եղել քառախորան տիպի հատակագծային, համապատասխանաբար և ծավալատարածական հնարավոր գրեթե բոլոր լուծումները։ Այս իմաստով հուշարձանները մեծ արժեք են ներկայացնում ընդհանրապես վաղ միջնադարի կենտրոնագմբեթ շինությունների ուսումնասիրության համար, քանի որ սրանք գալիս են հավաստելու, որ դեռևս V դարից սկսած, այլատիպ հորինվածքների հետ մեկտեղ հայ ճարտարապետները կիրառել են նաև քառախորան գմբեթավոր տիպը» (էջ 18)։

Աշխատության երկրորդ գլխում ներկայացված են 15 եռախորան հուշարձան։ Դրանցից Դորբանտիվանքի ս. Աստվածածին եկեղեցին հայկական ճարտարապետության մեջ բացառիկ տեղ է գրավում հատակագծի երկայնական՝ բազիլիկ ձևով, գմբեթատակ ուղղանկյուն (այլ ոչ քառակուսի) հիմքով, նախախորանի առկայությամբ և նրա արտաքուստ դրսևորված լինելու փաստով։ Ջրառատի եկեղեցին (որը հայտնաբերել է հեղինակը) լրացնում է հայկական՝ արտաքինից բազմանիստ հուշարձանների շարքը, լինելով վեցանիստ լուծման միակ օրինակը։ Ինքնատիպ է նաև Պեմզաշենի հուշարձանը՝ արտաքին ծավալի ուղղանկյուն ձևով, չորս անկյուններում զետեղված թաքստոցներով, հարակից երկու միանավ եկեղեցիների առկայությամբ, որով հուշարձանախումբը դառնում է IV—VII դդ. մեզ հայտնի միակ միանական համալիրը։ Այս գլխում ներկայացված հուշարձանները վկայում են, որ վաղ միջնադարում հայ ճարտարապետության մեջ քառախորանի հետ մեկտեղ մեծ տարածում է ունեցել եռախորան ենթատիպը (ուշագրավ է, որ նույն ժամանակաշրջանի վրացական ճարտարապետության մեջ, որ սերտ առնչություններ ունի հայկականի հետ, հայտնի չէ եռախորան ենթատիպի որևէ հուշարձան)։

Գրքի երրորդ գլուխը նվիրված է միախորան ենթատիպին։ Այստեղ հանրահայտ Կարմրավոր եկեղեցու հետ միասին ներկայացվում են գրականության մեջ քիչ հայտնի կամ ընդհանրապես անհայտ մի խումբ հուշարձաններ, որոնք ունեն մի շարք կարևոր առանձնահատկություններ։ Այսպես, օրինակ, «Նոր Կյանքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տրոմպային և առագաստային համակարգերով իրականացված փոխանցումը, եզակի լինելով հայ ճարտարապետության մեջ, փաստացի վկայությունն է այն բանի, որ VI դարում տրոմպայինի հետ միաժամանակ կիրառվել է նաև առագաստային փոխանցումը» (էջ 49)։ Բացառիկ է Սառնաղբյուրի ս. Ղազար եկեղեցին (V—VI դդ., նույնպես հեղինակի հայտնաբերած), որն ունի

բեմի ուղղանկյուն ձև. դրանով այն առանձնանում է «ոչ միայն այս տիպի, այլև ընդհանրապես հայկական կենտրոնագմբեթ շինություններ մեջ» (էջ 43)։

Սակայն, պետք է նշել, որ չի արդարացվում մենագրությունում վաղ միջնադարյան մի այնպիսի հետաքրքրական հուշարձանի բացակայությունը, ինչպիսին Արթիկի ս. Մարիամ եկեղեցին է։ Մասնագետներն այն թվագրում են նույնիսկ V դ. վերջով և համարում հայկական առաջին գմբեթավոր կառույցներից մեկը։ Իսկ հորինվածքով եկեղեցին փաստորեն խաչաձև գմբեթավոր հուշարձանների մի ինքնատիպ տարբերակ է, դրանց վաղագույն օրինակներից ու սերտորեն առնչվում է գրքում քննարկվող ճարտարապետական այս տիպի հետ։

Գրախոսվող մենագրության չորրորդ գլուխը նվիրված է հուշարձանների հատակագծային ու ծավալատարածական հորինվածքների, կոնստրուկտիվ տարրերի և համակարգերի, դեկորատիվ հարդարանքի համեմատական վերլուծությանը։ Այստեղ հեղինակը միանգամայն հիմնավորված եզրակացնում է, որ խաչաթևերի ներքին (ուղղանկյուն, շրջանաձև) ու արտաքին (ուղղանկյուն, շրջանաձև, բազմանիստ) լուծումները զուգահեռաբար գոյություն ունեցող ձևեր են և ոչ թե մեկը մյուսի զարգացման արդյունք։ Քառախորան, եռախորան և միախորան խմբերը, որոնք ներկայացնում են հորինվածքային ու ծավալատարածական միասնական մի համակարգ, միաժամանակյա սկիզբ ունեն և դրանցից որևէ մեկին չի կարելի առաջնություն տալ իբրև նախորդող ձևի։ Արժեքավոր է չորրորդ գլխի այն հատվածը, որտեղ մանրամասն քննարկվում է հուշարձանների բնույթը և պարզվում, որ դրանցից ոչ բոլորն են եկեղեցի, այլ գերակշռող մասը աղոթարաններ են՝ վկայարաններ, գերեզմանատուն եկեղեցիներ, տոհմական եկեղեցի-դամբարաններ, մկրտարաններ։

Խոսելով հուշարձանների պատերին առկա նշանագրերի մասին, հեղինակը մերժում է դրանք վարպետի աշխատանքի ծավալի ու վարձատրության չափը որոշող նշաններ լինելու մասին տեսակետը և համարում «որոշակի իմաստ ունեցող խորհրդանիշեր» (էջ 84)։ Սակայն այս բնորոշումը թերի է և անհրաժեշտ է լրացուցիչ հետազոտություն՝ նշանների բնույթը պարզելու համար։

Համոզիչ չէ նաև քննվող տիպի անվանումը, որը նաև գրքի վերնագիրն է։ Այս տիպի էական առանձնահատկությունը խաչաձևությունն է թե՛ հատակագծային, թե՛ ծավալատարածական հորինվածքներում։ Այնինչ բնորոշման մեջ բացակայում է նրա հիմնական հատկանիշը՝ խաչաձև լինելը։ Արտասահմանյան գրականության մեջ այս տիպն անվանվում է «ազատ խաչ»։ Նման բնորոշումը թեպետ լրիվ չի արտահայտում հորինվածքի էությունը, սակայն ավելի ճիշտ բնորոշում է և ունի մի առավելություն ևս՝ բավական հակիրճ է։ Ընդհանրապես հայերեն մասնագիտական գրականության մեջ միջնադարում կիրառվող ճարտարապետական տիպերը մինչև օրս իրենց արդեն ընդունված և միասնական անվանումները չունեն, բացառությամբ «գմբեթավոր դահլիճից»։ Դրանց մի մասը կոչվում է այդ տիպի հանգուցային հուշարձանի անունով, իսկ շատերի համար յուրաքանչյուր հեղինակ կիրառում է իր սեփական անվանումը, որով ճարտարապետական գրականության մեջ խայտաբղետություն է առաջանում։ Այսպես, օրինակ, Դայանն տաճարի հորինվածքը կոչվում է «գմբեթավոր բազիլիկա», «խաչաձև գմբեթավոր եկեղեցի» (թեպետ խաչաձևությունն արտահայտվում է միայն շենքի ծածկում), «քառամույթ խաչաձև տաճար» և այլն։ Վաղուց ժամանակն է, որպեսզի սովետահայ ճարտարապետական գրականության մեջ մշակվի այս տիպերի միասնական, գիտական ճիշտ անվանումը։

Վ. Գրիգորյանի մենագրության կարևոր արժանիքներից է քննարկվող չորս տասնյակ հուշարձանների թվագրումը։ Մինչև այժմ այս տիպի բոլոր կառույցները (որոնք արդեն հայտնի էին) համատարած թվագրվում էին բացառապես VII դ.։ Հեղինակը ճարտարապետական-գեղարվեստական համոզիչ վերլուծությամբ հիմնավորում է, որ կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների տիպը հայ ճարտարապետության մեջ կիրառվել է ոչ թե VII դ. սկսած, ինչպես մինչև այժմ ընդունված է մասնագիտական գրականության մեջ, այլ դեռևս V դ. զուգահեռաբար գոյություն է ունեցել այլատիպ (գմբեթավոր և սրահավոր) հորինվածքների հետ մեկտեղ։ Հիրավի, Վ. Գրիգորյանի մենագրությունը խոշոր ավանդ է հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության գործում և ցանկալի է, որ նման ուսումնասիրություններ ստեղծվեն նաև միջնադարյան Հայաստանում կիրառված կառուցվածքների մյուս տիպերի վերաբերյալ ևս։

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
Ճարտարապետության բնեռնածու